ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ՀԲՄԱՊՁԲ-20-4/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 17 .12. 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Վ.Գզրարյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 29.11.2019թ. կնքված № ՀԲՄԱՊՁԲ-20-4/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը և ՀՀ կառավարության 28.11.2019թ. №1703-Ն որոշումը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը հիմք ընդունելով ֆինանսական միջոցներ հատկացված լինելու հանգամանքը՝ որոշեցին Սույն Համաձայնագրով սահմանել գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված №1-ի և Հավելված №2-ի և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.11.2019թ. №1703-Ն որոշումը՝ նախատեսել կանխավճար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 247 100 000 (երկու հարյուր քառասունյոթ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Պայմանագրի գնից՝ 247 100 000 (երկու հարյուր քառասունյոթ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի տրամադրումը պայմանագիրը (Համաձայնագիրը) լիազոր մարմնի կողմից հաշվառվելուց հետո 5 բանկային օրվա ընթացքում: Կանխավճարի մարումն իրականացվում է մատակարարված ապրանքին համամասնորեն:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ Սպառազինության վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 1570003667300100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01557589
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Գլխավոր տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Վ.ԳԶՐԱՐՅԱՆ

Հավելված N 1
№ ՀԲՄԱՊՁԲ-20-4/2-1 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան Ապրանքի անվանումն ըստ տեղեկատուի	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարման քանակները ըստ եռամսյակների /2020թ./
						2-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.04.2020թ.
1	Ամենագնաց մեքենաներ (ամենագնաց)	հատ	14	17 650 000	247 100 000	14

Ծանոթություն՝ Մեքենաները պետք է լինեն նոր և չօգտագործված:
Մեքենաները պետք է հանձնվեն ԱԺ կենտրոնական պահեստ՝ 84029 զորամաս, Եղվարդի խճուղի:

Հավելված N 2
№ ՀԲՄԱՊՁԲ-20-4/2-1 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPVկոդը՝	*Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2019թ. Պետական բյուջեից ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2019թ
			դեկտեմբեր
1	Ամենագնաց մեքենաներ (ամենագնաց)	34111160/2	247 100 000

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ԱՁԸ

Գլխավոր տնօրեն Վ. ՎԱՐԶՐԱՐՅԱՆ